*Հավելված 5*

*Աշտարակ համայնքի ղեկավարի*
*2026 թվականի հունվարի 26-ի թիվ 197-Ա որոշման*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

| հ/հ | Առաջարկի անվանումը | Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն) | Առաջարկի կարգավիճակը<br>• Ընդունվել է<br>• Մերժվել է | Մերժման դեպքում՝ հիմնավորումը |
|---|---|---|---|---|
| 1. | Բակերի ասֆալտապատում /Նոր Երզնկա/, հեղինակ՝ Մարիամ Սարգսյան | Առաջարկվում է իրականացնել Նոր Երզնկա բնակավայրում 1 փողոցի բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 2. | Ագարակ գյուղի փողոցներում աղբամանների տեղադրում, հեղինակ՝ Թովմաս Զատիկյան | Ծրագրի նպատակն է Ագարակ գյուղի փողոցներում, հասարակական վայրերում և մարդաշատ հատվածներում տեղադրել համապատասխան քանակի աղբամաններ՝ կենցաղային թափոնների հավաքման, շրջակա միջավայրի մաքրության պահպանման և բնակիչների սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման նպատակով: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 3. | Արագածոտնի հանրային երիտասարդական զբոսայգի, հեղինակ՝ Արթուր Թամոյան | Առաջարկվում է Արագածոտն բնակավայրում իրականացնել հանրային երիտասարդական զբոսայգու կառուցման ծրագիր, որը կդառնա բնակավայրի սոցիալական կյանքի ակտիվացման և առողջ ապրելակերպի խթանման կարևոր հարթակ: Զբոսայգին հնարավորություն կտա գյուղի բնակիչներին արդյունավետ կազմակերպել իրենց ազատ ժամանակը, զբաղվել ֆիզիկական ակտիվությամբ և վարել առողջ ապրելակերպ: Նախատեսվում է զբոսայգին համալրել ժամանակակից մարզասարքերով, որոնք հնարավորություն կտան խթանել առողջ ապրելակերպի մասսայականացմանը, երիտասարդների ներգրավվածությանը: | Մերժվել է | Առաջարկը կրկնվում է, հայտը բացակայում է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | Մաքուր բակ, մաքուր կյանք /Ուշի/, հեղինակ՝ Անգելինա Սահակյան | Առաջարկը միտված է համայնքի հանրային տարածքներում կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամանների տեղադրմանը՝ մաքրության ապահովման և շրջակա միջավայրի աղտոտման նվազեցման նպատակով: Ծրագրի իրականացումը կբարելավի հանրային տարածքների գեղագիտական և սանիտարահիգիենիկ վիճակը և կնպաստի բնակիչների կողմից հանրային տարածքների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը: /կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ, աղբամանների տեղադրման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 5. | Բացօթյա ֆիզիկական ակտիվության գոտի /Ուշի/, հեղինակ՝ Եպրաքսյա Ղարիբյան | Ծրագիրը նպատակ ունի համայնքի հանրային տարածքում տեղադրել բացօթյա մարզասարքեր՝ ֆիզիկական ակտիվության խթանման և առողջ ապրելակերպի ձևավորման նպատակով: Սարքերի տեղադրումը հնարավորություն կտա համայնքի տարբեր տարիքային խմբերի բնակիչներին անվճար զբաղվել ֆիզիկական վարժություններով և կնպաստի հանրային տարածքի ակտիվ օգտագործմանը: /բացօթյա մարզասարքեր, տեխնիկական միջոցներ տեղադրման համար, մարդկային ռեսուրս/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 6. | Մարզահրապարակի կառուցում /Նոր Երզնկա/, հեղինակ՝ Լիլիթ Բեյբության | Առաջարկվում է Նոր Երզնկայում կառուցել բացօթյա մարզահրապարակ: /շինարարություն, մարզական սարքեր/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 7. | Բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում /Նոր Երզնկա/, հեղինակ՝ Վարդիթեր Խուրշուդյան | Նոր Երզնկա բնակավայրում բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում: Բակերը գտնվում են շատ վատ վիճակում /հող ու քար/, երեխաների համար չկա խաղալու հնարավորություն, անձրևների ժամանակ հողն ու ցեխը լցվում է բնակարանները: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 8. | Նորակառույց թաղամասում կոյուղագծերի անցկացում /Նոր Երզնկա/, հեղինակ՝ Սիրանուշ Միքայելյան | Առաջարկվում է Նոր Երզնկայի նորակառույց թաղամասում կոյուղագծերի անցկացում: Ամբողջ մի թաղամաս չունի կոյուղու գծեր, ինչը խանգարում է մարդկանց բնականոն կյանքին: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9. | Աշտարակ համայնքի Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզի բակի հիմնանորոգում, ցանկապատում, հեղինակ՝ Ոսկեհատ Ասատրյան | «Աշտարակ համայնքի Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բակը գտնվում է անմխիթար վիճակում և ամբողջությամբ հիմնանորոգման կարիք ունի: Առաջարկվում է իրականացնել բակի ամբողջական հիմնանորոգում՝ ներառելով խաղային և մարզական տարածքների վերանորոգում, նոր անվտանգ ծածկի տեղադրում, կանաչապատում, բակի նորոգում, ցանկապատի կառուցում և դարպասի բարեկարգում: /շինարարական նյութեր, ֆինանսական ռեսուրսներ, խաղային սարքավորումներ, կանաչապատման նյութեր, տեխնիկական միջոցներ և մարդկային ռեսուրսներ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 10. | Աշտարակ համայնքի Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզի բակի հիմնանորոգում, ցանկապատում, հեղինակ՝ Արմինե Մարգարյան | «Աշտարակ համայնքի Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բակը գտնվում է անմխիթար վիճակում և ամբողջությամբ հիմնանորոգման կարիք ունի: Առաջարկվում է իրականացնել բակի ամբողջական հիմնանորոգում՝ ներառելով խաղային և մարզական տարածքների վերանորոգում, նոր անվտանգ ծածկի տեղադրում, կանաչապատում, բակի նորոգում, ցանկապատի կառուցում և դարպասի բարեկարգում: /շինարարական նյութեր, ֆինանսական ռեսուրսներ, խաղային սարքավորումներ, կանաչապատման նյութեր, տեխնիկական միջոցներ և մարդկային ռեսուրսներ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 11. | Արագածոտնի հանրային երիտասարդական գրասրահի /Արագածոտն/, հեղինակ՝ Արթուր Թամոյան | Առաջարկվում է Արագածոտն բնակավայրում իրականացնել հանրային երիտասարդական գրասրահի կառուցման ծրագիր, որը կդառնա բնակավայրի սոցիալական կյանքի ակտիվացման և առողջ ապրելակերպի խթանման կարևոր հարթակ: Նախատեսվում է գրասրահին համալրել ժամանակակից մարզասարքերով, որոնք հնարավորություն կտան խթանել առողջ ապրելակերպը: Զբոսայգու կառուցումը կնպաստի բնակավայրի սոցիալական ակտիվացմանը, կենսունակության բարձրացմանը և երիտասարդների ներգրավվածությանը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | /շինանյութեր, տարածքի լուսավորության համար անհրաժեշտ սարքեր, մարզասարքեր, նստարաններ և կանաչապատման համար ծառեր, բույսեր/ | | |
| 12. | Աշտարակ համայնքի Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզի բակի հիմնանորոգում, ցանկապատում, հեղինակ՝ Փիրուզա Գրիգորյան | «Աշտարակ համայնքի Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բակը գտնվում է անմխիթար վիճակում և ամբողջությամբ հիմնանորոգման կարիք ունի: Առաջարկվում է իրականացնել բակի ամբողջական հիմնանորոգում՝ ներառելով խաղային և մարզական տարածքների վերանորոգում, նոր անվտանգ ծածկի տեղադրում, կանաչապատում, բակի նորոգում, ցանկապատի կառուցում և դարպասի բարեկարգում: /շինարարական նյութեր, ֆինանսական ռեսուրսներ, խաղային սարքավորումներ, կանաչապատման նյութեր, տեխնիկական միջոցներ և մարդկային ռեսուրսներ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 13. | Աշտարակ համայնքի Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզի բակի հիմնանորոգում, ցանկապատում, հեղինակ՝ Արմինե Մարգարյան | «Աշտարակ համայնքի Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բակը գտնվում է անմխիթար վիճակում և ամբողջությամբ հիմնանորոգման կարիք ունի: Առաջարկվում է իրականացնել բակի ամբողջական հիմնանորոգում՝ ներառելով խաղային և մարզական տարածքների վերանորոգում, նոր անվտանգ ծածկի տեղադրում, կանաչապատում, բակի նորոգում, ցանկապատի կառուցում և դարպասի բարեկարգում: /շինարարական նյութեր, ֆինանսական ռեսուրսներ, խաղային սարքավորումներ, կանաչապատման նյութեր, տեխնիկական միջոցներ և մարդկային ռեսուրսներ/ | Մերժվել է | Առաջարկը կրկնվում է: |
| 14. | Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի աղբամանների տեղադրում, հեղինակ՝ Անժելա Վարդանյան | Առաջարկվում է բոլոր թաղամասերում աղբամանների տեղադրում: Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրն ունի աղբամանների խնդիր: /աղբամաններ, ֆինանսական ռեսուրսներ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 15. | Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի աղբամանների տեղադրում, հեղինակ՝ Անժելա Վարդանյան | Առաջարկվում է բոլոր թաղամասերում աղբամանների տեղադրում: Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրն ունի աղբամանների խնդիր: /աղբամաններ, ֆինանսական ռեսուրսներ/ | Մերժվել է | Առաջարկը կրկնվում է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16. | Ֆուտբոլի խաղադաշտի կառուցում /Արուճ/, հեղինակ՝ Վարդան Մելքոնյան | Առաջարկվում է Արուճ բնակավայրում կառուցել ֆուտբոլի դաշտ: Առկա չէ հագեցած ֆուտբոլի դաշտ, որպեսզի երեխաները զբաղվեն: Երեխաները կունենան վայր, որտեղ կանցկացնեն ժամանակ: /աշխատուժ, շինանյութ, ֆինանսական միջոցներ, մարզասարքեր/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 17. | Կանաչ համայնք, բարեկարգում /Սասունիկ/, հեղինակ՝ Մարիամ Բզնունի | Առաջարկվում է իրականացնել Սասունիկ բնակավայրի 9-րդ փողոց, 1-ին նրբանցքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: Առաջարկվում է փողոցում կատարել ասֆալտապատման, արտաքին լուսավորության և բարեկարգման աշխատանքներ, տեղադրել սանիտարահիգիենիկ տեսակավորման աղբամաններ, նստարաններ, գիշերային լուսավորության համակարգ: Ցանկալի է նաև փողոցի կոյուղու համակարգի տեղադրում կատարվի, քանի որ յուրաքանչյուր ընտանիք իր նախաձեռնությամբ է իրականացնում մաքրման աշխատանքները: Երեկոյան ժամերին փողոց դուրս գալը վտանգավոր է, քանի որ շատ են թափառող շները: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 18. | Ֆուտբոլի դաշտի կառուցում, տարածքի բարեկարգում և լուսավորում /Նոր Ամանոս/, հեղինակ՝ Ահարոն Խաչատրյան | Առաջարկվում է Աշտարակ համայնքի Նոր Ամանոս բնակավայրի վարչական տարածքում գտնվող ֆուտբոլի դաշտի կառուցում, տարածքի բարեկարգում և լուսավորում: Նոր Ամանոս բնակավայրերում չկա համապատասխան ֆուտբոլի խաղադաշտ, որտեղ բնակչությունը կկարողանա անցկացնել իրենց ազատ ժամանցը, կազմակերպել տարատեսակ բացօթյա խաղեր: Սակայն Նոր Ամանոս բնակավայրի վարչական տարածքում առկա է մոտ 1000քմ բետոնապատված, հարթ մակերեսով նախկին գործարանի տարածք, եթե տարածքը բարեկարգվի, լուսավորվի և կանաչապատվի շատ հարմար է ֆուտբոլի խաղադաշտ կառուցելու համար: Ծրագրի պահանջվող միջոցների չափը ըստ նախագծի հաշվարկի: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19. | Մշակույթի տան սենյակներից մեկի հարդարում և մարզական սարքավորումների տեղադրում /Նոր Ամանոս/, հեղինակ՝ Բուզանդ Խաչատրյան | Առաջարկվում է Աշտարակ համայնքի Նոր Ամանոս բնակավայրի մշակույթի տան սենյակներից մեկի հարդարում և մարզական սարքավորումների տեղադրում: Այն դրական ազդեցություն կունենան գյուղի երիտասարդների ինքնաբացահայտման, զարգացման, կազմվածքի ձևավորման վրա: Սպորտային, ինտելեկտուալ, ժամանցային միջոցառումները կնպաստեն գյուղի կյանքի աշխուժացմանը, երիտասարդական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 20. | Ավտոճանապարհի կառուցում /Նոր Երզնկա/, հեղինակ՝ Կարեն Խուրշուդյան | Առաջարկվում է կառուցել կարճ ու հասանելի ճանապարհ: Նոր Երզնկան Աշտարակին կապող ավելի կարճ ճանապարհ կա, որը հասանելի չէ մարդատար ավտոմեքենաների համար: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 21. | Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրում ժամանակակից մանկական խաղահրապարակի կառուցում, հեղինակ՝ Համայակ Գրիգորյան | Նախատեսվում է Արագածոտն բնակավայրում տեղադրել խաղային սարքավորումներ փոքրերի համար, նստարաններ, աղբամաններ, լուսավորություն, այն դարձնելով փոքրերի ամենասիրելի վայրը: Խաղահրապարակի կառուցումը կնպաստի ոչ միայն բնակավայրի կյանքի բարելավմանը, այլ նաև երեխաների ժամանցի կազմակերպման դեր կունենա բնակիչների համար: Նշված բնակավայրում շատ քիչ են համապատասխան գոտիները, որտեղ երեխաները կկարողանան անցկացնել իրենց ազատ ժամանցը, խաղալ, կազմակերպել տարատեսակ բացօթյա հանդիպումներ, խաղեր:<br>Ծնողները նշված բնակավայրում ոչ մի տեղ իրենց երեխաներին տանել չեն կարող, չկա որևէ համապատասխան տեղ: Ծրագրի պահանջվող միջոցների չափը նախնական հաշվարկներով կազմել է շուրջ՝ 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ: | Ընդունվել է | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 22. | Մեր համայնքը, մեր տունը /Սասունիկ/, հեղինակ՝ Մարիամ Բզնունի | Առաջարկվում է Սասունիկ բնակավայրի 9-րդ փ. 1-ին նրբ. հատվածում իրականացնել բարեկարգման աշխատանքներ, մասնավորապես՝ արտաքին լուսավորության ապահովում, իրականացնել ասֆալտապատում նշված փողոցում, կոյուղային համակարգի տեղադրում, ավելացնել նստարաններ և սենսորային տեսակավորվող աղբամաններ՝ կուտակումներից խուսափելու համար: Խնդրահարույց է կոյուղիների բացակայությունը, յուրաքանչյուր ընտանիք իր նախաձեռնությամբ է իրականացնում մաքրությունը: | Մերժվել է | Առաջարկը կրկնվում է, հայտը բացակայում է |
| 23. | Մեր համայնքը, մեր տունը /Սասունիկ/, հեղինակ՝ Մարիամ Բզնունի | Առաջարկվում է Սասունիկ բնակավայրի 9-րդ փ. 1-ին նրբ. հատվածում իրականացնել բարեկարգման աշխատանքներ, մասնավորապես՝ արտաքին լուսավորության ապահովում, իրականացնել ասֆալտապատում նշված փողոցում, կոյուղային համակարգի տեղադրում, ավելացնել նստարաններ և սենսորային տեսակավորվող աղբամաններ՝ կուտակումներից խուսափելու համար: Խնդրահարույց է կոյուղիների բացակայությունը, յուրաքանչյուր ընտանիք իր նախաձեռնությամբ է իրականացնում մաքրությունը:<br>/մարդկային ռեսուրսներ, շինարարական նյութեր, տեխնիկա, աղբամաններ, նստարաններ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 24. | «Արագածոտնի բազմաֆունկցիոնալ սպորտային դաշտ», հեղինակ՝ Գայանե Զարոյան | Առաջարկվում է կառուցել բազմաֆունկցիոնալ սպորտային դաշտ՝ թենիսի, վոլեյբոլի և բասկետբոլի համար նախատեսված: Դաշտը կստեղծի անվտանգ և ժամանակակից միջավայր մարզումների, թիմային խաղերի և համայնքային մրցումների համար, ինչը կուժեղացնի համայնքի սոցիալական կապերը ու կձևավորի միասնականություն:<br>/թենիսի, վոլեյբոլի և բասկետբոլի համար անհրաժեշտ գույք և պարագաներ, դաշտի մակերեսապատման համար շինարարական նյութեր, լուսավորության համակարգեր, նստարաններ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 25. | Նոր Երզնկայի նորակառույց թաղամասի ասֆալտապատում և բարեկարգում, հեղինակ՝ Ավետիս Սահակյան | Նոր Երզնկայի նորակառույց թաղամասը երբևէ ասֆալտապատված չի եղել, այդտեղ ճանապարհներն ամբողջությամբ հողային ծածկույթով են: Անձրևի և ձյան ժամանակ ճանապարհները դառնում են ցեխոտ և դժվարանցանելի, իսկ չոր եղանակներին մշտապես փոշոտ են: Թաղամասն արդեն ունի բավական մեծ թվով բնակիչներ, որոնց թիվն օրեցօր աճում է: Թաղամասը ասֆալտապատ և բարեկարգված լինելու դեպքում կարող էր շատ արագ տեմպերով զարգանալ: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 26. | Մանկական խաղահրապարակի կառուցում /Փարպի/, հեղինակ՝ Նորիկ Սարգսյան | Առաջարկվում է Փարպի բնակավայրում կառուցել մանկական խաղահրապարակ: Հիանալի վայր կլինի երեխաների էներգիան ծախսելու, զվարճանալու և տարեկիցների հետ շփվելու համար, կնպաստի ընկերական հարաբերությունների զարգացմանը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 27. | Տեղեկատվական ցուցանակներ /Օշական/, հեղինակ՝ Մելինե Եղիազարյան | Օշական բնակավայրը հանդիսանում է հարուստ պատմամշակութային ժառանգություն ունեցող կարևոր զբոսաշրջային կենտրոն: Բնակավայրի պատմամշակութային հուշարձանների և տեսարժան վայրերի տարածքներում տեղեկատվական ցուցանակների տեղադրումն էական նշանակություն կունենա այցելուների համար: Ցանկալի է իրականացնել բնակավայրի անբարեկարգ թաղամասերի ասֆալտապատման աշխատանքներ: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 28. | Մշակույթի և ժառանգության պահպանում /Օշական/, հեղինակ՝ Համիկ Շմավոնյան | Առաջարկվում է Օշական գյուղի Հայրենական մեծ պատերազմում զոհված օշականցիների հուշակոթողի հարակից տարածքում պուրակի հիմնում, տարածքի ցանկապատում, սալիկապատում: Տեղադրել հուշաքար Հայրենական մեծ պատերազմում զոհվածների և ԼՂ զոհված զինվորների անվանական գրատախտակով, այն դարձնել գործող պուրակ՝ ծառուղիներով և նստարաններով: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 29. | Լուսավորություն /Ավան/, հեղինակ՝ Արմենուհի Միտոյան | Առաջարկվում է իրականացնել ներհամայնքային 1 փողոց 4 նրբանցքի 850մ լուսավորություն, ակնկալվում է գյուղի բնակչության ակտիվացում: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 30. | Կանաչ Օշական, հեղինակ՝ Աշոտ Ամիրբեկյան | Առաջարկվում է ոռոգելի դարձնել Օշական գյուղի կենտրոնական հատվածից մի մաս: Կանաչ Օշական ծրագրի նպատակն է բարեկարգել Օշականի ոռոգման պոմպակայանը, հնարավորություն տալով ոռոգելի ու մշակելի դարձնել գյուղի կենտրոնական հատվածում գտնվող մի շարք բնակելի հողամասերի, համայնքային նշանակության «Անահիտ», «Գայանե» մանկապարտեզների, Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի, երաժշտական դպրոցի, ամբուլատորիայի, գյուղի վարչական շենքի տարածքները: Առաջարկվում է վերանորոգել պոմպակայանը, ջրավազանը, տեղադրել նոր պոմպ: Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ է նոր պոմպի ձեռքբերում, խողովակաշարերի թարմացում, ջրավազանի մասնակի ոռոգում: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 31. | Ուջան բնակավայրի մուտքի վերակառուցման և կանաչապատման ծրագիր, հեղինակ՝ Ասլի Թադևոսյան | Ստեղծել Ուջան բնակավայրին հարիր, գեղագիտական և ներկայանալի մուտք, որը կծառայի որպես համայնքի այցեքարտ: Մուտքը նախատեսվում է ձևավորել դեկորատիվ կամարով, ազգային ոճի քարե տարրերով, լուսավորությամբ և կանաչապատմամբ՝ ապահովելով տեսողական գրավչություն և հյուրընկալ միջավայր:Ներկայումս Ուջան բնակավայրի մուտքի տարածքը չունի համապատասխան բարեկարգում և կանաչապատում, ինչի հետևանքով այն չի ստեղծում դրական առաջին տպավորություն բնակիչների և այցելուների համար: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 32. | Աղբամանների տեղադրում /Նոր Եղեսիա/, հեղինակ՝ Գոհար Գասպարյան | Հաշվի առնելով բնակավայրի տարածքում շրջակա միջավայրի պահպանման, մաքրության և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է տեղադրել աղբամաններ Նոր Եղեսիա բնակավայրում: /աղբամանների տեղադրում/ | Մերժվել է | Հայտը ներկայացվել է այլ անձի անունով: |
| 33. | Ասֆալտապատում /Ոսկեհատ/, հեղինակ՝ Ռաֆիկ Սարգսյան | Առաջարկվում է ասֆալտապատման աշխատանքներ իրականացում: Ծրագրի հիմնական նպատակն է երթևեկության անվտանգության և հարմարավետության բարձրացումը: Ասֆալտապատումն ուղղակիորեն ազդում է մարդու կյանքի որակի վրա: Քանդված ճանապարհը վնասում է մեքենաները: /նյութական, տեխնիկական, մարդկային, լաբորատոր ռեսուրսներ/ | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 34. | Կանաչ համայնք, բարեկարգում /Սասունիկ/, հեղինակ՝ Սվետլաննա Մանուկյան | Առաջարկվում է Սասունիկ գյուղից դեպի Կարին բնակավայր տանող ճանապարհի՝ 17 փողոցից 12 փողոցի հիմնովին վերանորոգում, ճանապարհի երկու կողմերում տնկել ծառեր, որոնք հնարավորություն կտան բնակիչներին տեղաշարժվելիս ամռան տապին պաշտպանվելու համար, տեղադրել նստարաններ և աղբամաններ: | Մերժվել է | Առաջարկը կրկնվում է, հայտը բացակայում է: |
| 35. | Կանաչ համայնք, բարեկարգում /Սասունիկ/, հեղինակ՝ Սվետլաննա Մանուկյան | Առաջարկվում է Սասունիկ գյուղից դեպի Կարին բնակավայր տանող ճանապարհի՝ 17 փողոցից 12 փողոցի հիմնովին վերանորոգում, ճանապարհի երկու կողմերում տնկել ծառեր, որոնք հնարավորություն կտան բնակիչներին տեղաշարժվելիս ամռան տապին պաշտպանվելու համար, տեղադրել նստարաններ և աղբամաններ:<br>/տեխնիկա, մարդկային աշխատուժ, լույսերի համար սյուներ, աղբամաններ, նստարաններ, բույսեր, ծառեր/ | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 36. | Աղձք վարչատարածքում բուժկետի վերանորոգում և կառուցապատում, հեղինակ՝ Ռոման Սահակյան | Աղձք վարչատարածքն արդեն երկար տարիներ չունի գործող բուժկետ, ժողովրդի խնդրանքն է, որ կառուցապատվի բուժկետ: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 37. | Աղբամանների տեղադրում /Նոր Եղեսիա/, հեղինակ՝ Սարգիս Մելքոնյան | Հաշվի առնելով բնակավայրի տարածքում շրջակա միջավայրի պահպանման, մաքրության և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է տեղադրել աղբամաններ Նոր Եղեսիա համայնքում:<br>/աղբամանների տեղադրում/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 38. | **«Խելացի կանգառների կառուցում Ուջան բնակավայրում», հեղինակ՝ Մարիա Սուքիասյան** | **Նախատեսվում է Ուջան բնակավայրում հասարակական տրանսպորտի համար նախատեսված ժամանակակից «խելացի կանգառների» կառուցում: Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել Աշտարակ համայնքի տնտեսական զարգացմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Կանգառները նախատեսվում է իրականացնել մեկհարկանի մոդուլային կառույց 3*4 չափերով, կահավորված նստարաններով և արևային լուսավորության համակարգով, ապահովել անվճար ինտերնետ կապ Wi-Fi, ապահովել[illegible]ան հակահրդեհային պահպանման** | **Ընդունվել է** | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | համակարգ, պետք է նախատեսել նաև ջեռուցման համակարգ արևային պանելներով, գովազդի և հայտարարությունների վահանակներ: Ավտոբուսային կանգառների տեղերն ընտրվել են բնակավայրի բնակիչների հետ հանրային քննարկումների միջոցով: | | |
| 39. | Աշտարակ համայնքի Աղձք բնակավայրի բուժկետի վերանորոգում, հեղինակ՝ Ռոման Սահակյան | Աղձք բնակավայրի գործող բուժկետը երկար տարիներ գտնվում է անմխիթար վիճակում և չի համապատասխանում անհրաժեշտ պայմաններին: Նշված հանգամանքը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչության առողջապահական սպասարկման կազմակերպման հարցում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ նախատեսվում է վերանորոգել բուժկետի շենքը, այն ապահովել համապատասխան գույքով և անհրաժեշտ մասնագիտական աշխատակիցներով՝ գյուղի բնակիչների համար պատշաճ բժշկական ծառայություններ ապահովելու նպատակով: Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել Աշտարակ համայնքի տնտեսական զարգացմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Բուժկետի գործունեության հիմնական նպատակն է բնակչության սպասարկումը, առաջնային բուժօգնության մատուցումը: Ծրագրի պահանջվող միջոցների չափը նախնական հաշվարկներով կազմել է շուրջ՝ 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: | Ընդունվել է | |
| 40. | Աղձք վարչատարածքում գերեզմանատան ցանկապատում, հեղինակ՝ Ստյոպա Հակոբյան | Աղձք վարչատարածքի բնակիչների անունից առաջարկվում է ցանկապատել գերեզմանատունը՝ խոշոր եղջերավոր կենդանիների մուտքը սահմանափակելու, ինչպես նաև անկանոն մուտքն ու ելքը վերահսկելու նպատակով, որպեսզի չվնասվեն գերեզմանաքարերը և պահպանվի տարածքի պատշաճ վիճակը: Գերեզմանատունը կունենա համապատասխան ստանդարտներին ցանկապատ: /բետոնյա հիմքով ցանկապատ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 41. | Ոսկեվազ գյուղում խաղահրապարակի կառուցում, հեղինակ՝ Արտակ Սարդարյան | Առաջարկվում է Ոսկեվազ գյուղում խաղահրապարակի կառուցում: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 42. | Ոսկեվազ գյուղում մայթերի կառուցում, հեղինակ՝ Լևոն Ավետիսյան | Առաջարկվում է Ոսկեվազ գյուղում մայթերի կառուցում: /ասֆալտ, մայթերի բազալտե եզրաքարեր/ | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 43. | Ուջան բնակավայրում մարզասրահի վերանորոգում և կահավորում, հեղինակ՝ Աշոտ Սիմոնյան | Առաջարկվում է բնակավայրում մարզասրահի վերանորոգում և հարմարեցում՝ այն դարձնելով լիարժեք մարզասրահ՝ անհրաժեշտ մարզագույքով և պայմաններով: Մարզասրահը կծառայի համայնքի բնակիչներին՝ - հատկապես երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին՝ ֆիզիկական ակտիվության, մարզումների և սպորտային միջոցառումների կազմակերպման նպատակով: /մարզագույք, մարդկային ռեսուրսներ/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 44. | Աղբամանների տեղադրում /Ղազարավան/, հեղինակ՝ Անի Սարգսյան | Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրում անհրաժեշտություն կա աղբամաններ տեղադրելու՝ աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման որակն ավելի բարձրացնելու նպատակով: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 45. | Հանրային զբոսայգու կառուցում /Ուջան/, հեղինակ՝ Իշխան Ղուկասյան | Ուջան գյուղն ունի ակտիվ երիտասարդներ և բավականին հարուստ մշակութային կյանք, սակայն գյուղը չունի զբոսանքի՝ ժամանցի վայրեր: Բնակավայրում առկա է 0,75 հա մակերեսով տարածք, որը նախատեսված է եղել զբոսայգի կառուցելու համար, սակայն գումար չլինելու պատճառով այն առ այսօր չի ծառայել նպատակին: Ուստի անհրաժեշտ է գյուղում կառուցել հանրային զբոսայգի, մասնավորապես՝ անհրաժեշտ է ճեմուղիների, շատրվանների, անցուղիների կառուցում, նստարանների տեղադրում և կանաչապատում, որը կմիավորի տարբեր նախասիրություններ և հետաքրքրություններ ունեցող անձանց: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 46. | Ոսկեվազ գյուղում մշակույթի տան բարեկարգում, հեղինակ՝ Արամայիս Նիկողոսյան | Առաջարկվում է Ոսկեվազ գյուղում մշակույթի տան բարեկարգում: /դռներ, պատուհաններ, տանիքի թիթեղներ, ջեռուցման համակարգ, գույք, կոսմետիկ բարեկարգման միջոցներ/ | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 47. | Անտուն շների մարդասիրական լուծում /Սասունիկ/, հեղինակ՝ Մարիամ Բաբայան | Սասունիկ գյուղում առկա է թափառող և անտուն շների աճող խնդիր, որը ներկայումս չունի համակարգված և մարդասիրական լուծում: Ծրագրի նպատակն է իրականացնել թափառող շների մարդասիրական կառավարում՝ ապահովելով նրանց առողջությունը, վերահսկելով քանակը և խթանելով մարդկանց և կենդանիների խաղաղ համակեցությանը: Նախատեսվում է իրականացնել թափառող շների հաշվառում և բժշկական զննում, կազմակերպել ստերիլիզացիա և ստերջացում մասնագետ անասնաբույժների միջոցով: | Մերժվել է | Չի համապատասխանում ավագանու սահմանած առաջնահերթություններին: Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 48. | Աղբահանություն /Կոշ/, հեղինակ՝ Անժելա Մանուկյան | Առաջարկվում է Կոշ բնակավայրում տեղադրել աղբամաններ: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 49. | Ուջան բնակավայրում ԹՈՒՄՈ կենտրոնի համակարգչային դասասենյակի ստեղծում, հեղինակ՝ Լաուրա Սաֆարյան | «Ուջան բնակավայրում ԹՈՒՄՈ կենտրոնի համակարգչային դասասենյակի ստեղծում». Առաջարկը վերաբերում է Ուջան բնակավայրում ժամանակակից համակարգչային դասասենյակի ստեղծմանը՝ ԹՈՒՄՈ կենտրոնի կրթական սկզբունքներով: Դասասենյակը կծառայի համայնքի երեխաների, ինչպես նաև հարակից բնակավայրերի /Արագածոտն, Նոր Եդեսիա/ երեխաների և երիտասարդների տեխնոլոգիական, ստեղծարար և թվային հմտությունների զարգացմանը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 50. | Ֆուտբոլի խաղադաշտի կառուցում /Ոսկեհատ/, հեղինակ՝ Սվետլանա Մարգարյան | Առաջարկվում է ֆուտբոլի խաղադաշտի կառուցում: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Ոսկեհատ բնակավայրի զարգացմանը, առաջընթացին և երիտասարդ սերնդի ապագայի և ժամանակակից մտահորիզոնի առաջխաղացմանը: Ծրագրի արժեքը կհստակեցվի նախագծային-նախահաշվային աշխատանքները ձեռք բերելուց հետո: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 51. | Մասնակցային բյուջետավորման առաջարկի նախագիծ /խաղահրապարակի կառուցում, տարածքի բարեկարգում, Անտառուտ/, հեղինակ՝ Սիրանուշ Ավետիսյան | Առաջարկվում է խաղահրապարակի կառուցում, տարածքի բարեկարգում Անտառուտ գյուղում: Ծրագրի նպատակն է Անտառուտ գյուղում ստեղծել ժամանակակից, անվտանգ և բազմաֆունկցիոնալ խաղահրապարակ՝ նախատեսված տարբեր տարիքային խմբերի երեխաների և մեծահասակների համար:Խաղահրապարակը կկառուցվի կանաչապատ միջավայրում՝ համադրելով խաղային, սպորտային և | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հանգստի տարրերը: Ծրագրի արժեքը կկազմի մոտ 12 միլիոն ՀՀ դրամ: | | |
| 52. | «Օրգով գյուղում մանկական խաղահրապարակի կառուցում և տարածքի բարեկարգում», հեղինակ՝ Արտակ Հովհաննիսյան | Ծրագրի շրջանակներում առաջարկվում է Օրգով բնակավայրի վարչական շենքի բակում կառուցել մանկական խաղահրապարակ, իրականացնել տարածքի բարեկարգման աշխատանքներ, ինչպես նաև ապահովել անվտանգ և հարմարավետ պայմաններ երեխաների խաղի, հանգստի և շփման համար: Նախագիծը նպատակ ունի խթանել երեխաների առողջ ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական զարգացումը, ինչպես նաև նպաստել համայնքային կյանքի ակտիվացմանն ու սոցիալական կապերի ամրապնդմանը: Ծրագրի իրականացման համար պահանջվող միջոցների չափը կազմում է շուրջ 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 53. | «Օրգով գյուղի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում», հեղինակ՝ Գրիգոր Մնացականյան | Ծրագրի շրջանակներում առաջարկվում է Օրգով բնակավայրի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացում: Ծրագիրը միտված է համայնքի բնակիչների կյանքի որակի բարելավմանը, ազատ և անվտանգ տեղաշարժին: Ծրագրի իրականացման համար պահանջվող միջոցների չափը կազմում է շուրջ 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 54. | Աղբամանների տեղադրում Կոշ բնակավայրում, հեղինակ՝ Լուսինե Գալստյան | Առաջարկվում է Կոշ բնակավայրի կենտրոնական փողոցներում տեղադրել աղբամաններ: Չնայած նրան, որ Կոշ բնակավայրում կատարվում է աղբահանություն, փողոցներում առկա են աղբի կույտեր, ինչը ոչ գրավիչ է դարձնում բնակավայրը: Իրավիճակը չի փրկում Կոշի միջնակարգ դպրոցի կողմից հաճախակի կատարվող շաբաթօրյակները: Շաբաթօրյակի հաջորդ օրը նորից փողոցներում հայտնվում են տոպրակներ, շշեր, պլաստմասե տարրեր: Աղբամանների առկայությունը խիստ անհրաժեշտ է Կոշ բնակավայրին: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 55. | Ագարակ գյուղի մշակույթի տան վերանորոգում, հեղինակ՝ Հասմիկ Մարտիրոսյան | Առաջարկի նպատակն է վերակառուցել Ագարակ գյուղի մշակույթի տունը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 56. | Կանաչ համայնք, բարեկարգում /Սասունիկ/, հեղինակ՝ Հարություն Գրիգորյան | Առաջարկվում է, որպեսզի նշված ճանապարհը վերանորոգվի, քանի որ առկա են մեծ ջրափոսեր և առավել վատ եղանակային պայմաններում դժվարանցանելի են տեղի բնակիչների համար՝ դպրոցում սովորող աշակերտների, ուսանողների և տարեց մարդկանց համար, դժվարանցանելի են նաև ավտոմեքենաների համար, չկա նաև ոռոգման համապատասխան համակարգ, որի պատճառով հեղեղվում է ճանապարհը: Առաջարկվում է նաև աղբամանների քանակի ավելացում, որը զերծ կպահի աղբի տարածումից ու կուտակումից: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 57. | Օշականի մշակույթի տան վերանորոգում, հեղինակ՝ Մելինե Եղիազարյան | Օշական բնակավայրի մշակույթի տունը հանդիսանում է համայնքի մշակութային կյանքի կարևոր կենտրոն, որտեղ գործում են տարբեր ստեղծագործական խմբակներ, անցկացվում են մշակութային միջոցառումներ և իրականացվում է երեխաների ու երիտասարդների գեղագիտական դաստիարակությունը: Ներկայումս մշակույթի տան շենքը գտնվում է անմխիթար վիճակում և չունի ջեռուցման համակարգ, ինչը խոչընդոտում է խմբակների բնականոն գործունեությանը, հատկապես ձմեռային ամիսներին: Շենքի վերանորոգումը կստեղծի անվտանգ, հարմարավետ և ժամանակակից պայմաններ սաների և համայնքի բնակիչների համար: /ջեռուցում, կոսմետիկ վերանորոգում, էլեկտրական լարերի վերանորոգում և կահավորում/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 58. | «Ուջան բնակավայրի պատմամշակութային տարածքի կանաչապատ հատվածի ոռոգման ջրագծի կառուցում», հեղինակ՝ Խամլե Հովհաննիսյան | Առաջարկը նախատեսում է Ուջան բնակավայրի պատմամշակութային նշանակություն ունեցող տարածքում՝ Հայ հայդուկների հուշահամալիրի տարածքի առկա կանաչապատ հատվածի համար ոռոգման ջրագծի կառուցում: Ծրագրի իրականացմամբ կապահովվի կանաչ տարածքների կանոնավոր և արդյունավետ ոռոգումը՝ պահպանելով ծառերն ու կանաչապատ տարածքները, ինչպես նաև բարելավելով տարածքի ընդհանուր տեսքն ու էկոլոգիական վիճակը: /ջրագծի խողովակներ և միացնող տարրեր, ոռոգման համակարգի տեխնիկական սարքավորումներ, տեխնիկա/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 59. | Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցի 30, 32, 34 և 36 բազմաբնակարան շենքերի բակերում խաղադաշտի և խաղահրապարակի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում, հեղինակ՝ Զարզանդ Ալեքսանյան | «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցի 30, 32, 34 և 36 բազմաբնակարան շենքերի բակերում խաղադաշտի և խաղահրապարակի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել Աշտարակ քաղաքի բնակչությանը մատուցվող ծառայությունների, պայմանների և որակի բարելավմանը՝ Աշտարակ համայնքի բնակավայրերում խաղահրապարակների կառուցման, տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացմանը:<br>Ծրագրով նախատեսվում է ապահովել ավելի լավ հանգստի և ժամանցի պայմաններ և խթանել երեխաների առողջ զարգացումը քաղաքում: Երեխաների խնամքի և հանգստի կազմակերպման համար համայնքում անհրաժեշտ պայմանների ստեղծումը հանդիսանում է գերակա խնդիր: Նախատեսվում է բնակավայրում տեղադրել խաղային ատրակցիոններ փոքրերի համար, տաղավարներ մեծահասակների համար, նստարաններ, աղբամաններ, լուսավորություն, այն դարձնելով մեծերի ու փոքրերի ամենասիրելի վայրը: Ծրագրի իրականացումը շատ կարևոր է համայնքի զարգացման համար, Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցի 30, 32, 34 և 36 բազմաբնակարան շենքերի բակում, բնակավայրի բնակիչները բազմիցս են բարձրացնում վերոնշված խնդիրը, հաշվի առնելով պահանջարկի մեծացումը, շատ նպատակահարմար է համայնքում ունենալ բարեկարգված խաղահրապարակ:<br>Ծրագրի պահանջվող միջոցների չափը նախնական հաշվարկներով կազմել է շուրջ՝ 70 000 000 (յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ: | Ընդունվել է | |
| 60. | Մշակույթի տան վերանորոգում /Բազմաղբյուր/, հեղինակ՝ Մարինե Ղազարյան | Առաջարկվում է Բազմաղբյուր բնակավայրում մշակույթի տան դահլիճի վերանորոգում: | Մերժվել է | Հայտը ներկայացվել է այլ անձի անունով: |
| 61. | Աղբամաններ /Բազմաղբյուր/, հեղինակ՝ Մարինե Ղազարյան | Առաջարկվում է Բազմաղբյուր բնակավայրում աղբամանների տեղադրում: Ծրագրի բուն նպատակն է համայնքում ապահովել մաքրությունը և դարձնել առավել բարեկեցիկ: | Մերժվել է | Հայտը ներկայացվել է այլ անձի անունով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 62. | Արտաշավան համայնքի խաղահրապարակի կառուցում, հեղինակ՝ Գևորգ Մարգարյան | Արտաշավան բնակավայրում խաղահրապարակի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել Արտաշավան բնակավայրի բնակչությանը մատուցվող ծառայությունների պայմանների և որակի բարելավմանը՝ Արտաշավան բնակավայրում խաղահրապարակների կառուցման, տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացմանը: Նախատեսվում է բնակավայրերում տեղադրել խաղային ատրակցիոններ փոքրերի համար, տաղավարներ մեծահասակների համար, նստարաններ, աղբամաններ, լուսավորություն, այն դարձնելով մեծերի ու փոքրերի ամենասիրելի վայրը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 63. | Աղբահանություն /Կոշ/, հեղինակ՝ Մերրի Մինասյան | Առաջարկվում է Կոշ բնակավայրում տեղադրել աղբամաններ: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 64. | Խաղահրապարակի կառուցում /Ղազարավան/, հեղինակ՝ Կարինե Ասատրյան | Ղազարավան բնակավայրում անհրաժեշտություն կա խաղահրապարակի կառուցման, որն էլ նախատեսում է խաղային ատրակցիոններ փոքրերի համար, տաղավարներ մեծահասակների համար, նստարաններ, աղբամաններ, կանաչապատ տարածք, լուսավորություն՝ այն դարձնելով մեծերի ու փոքրերի ամենասիրելի վայրը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 65. | Կանաչ համայնք, բարեկարգում /Սասունիկ/, հեղինակ՝ Հակոբ Խաչատրյան | Առաջարկվում է Սասունիկ վարչական տարածքի զոհված հերոսների պանթեոնի բարեկարգում և կանաչապատում: Առկա է կանաչապատման մեծ տարածք, որն անմխիթար վիճակում է: Կարիք կա նստարանների և աղբամանների, որպեսզի զբոսայգու տարածքում աղբ չկուտակվի: Այդ թվում նաև գիշերային լուսավորության համակարգի տեղադրում: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 66. | Արտաշավան բնակավայրի մշակույթի տան վերանորոգում, հեղինակ՝ Նաիրի Գրիգորյան | Առաջարկվում է Արտաշավան բնակավայրի մշակույթի տան վերանորոգման իրականացում: Մշակույթի տունը համայնքի կարևոր կենտրոններից մեկն է, որտեղ մարդիկ կարող են զարգացնել իրենց կարողությունները, ճանաչել մշակույթը և օգտակար անցկացնել ազատ ժամանակը: Այն մեծ նշանակություն ունի թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների համար: Երեխաների համար մշակույթի տունը ստեղծագործելու և սովորելու լավագույն վայրերից է: Մեծահասակների համար | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մշակույթի տունը հնարավորություն է տալիս զարգանալ և հանգստանալ առօրյա աշխատանքից հետո: Այն օգնում է մարդկանց զարգանալ, պահպանել մշակույթը և ստեղծել համախմբված ու ստեղծագործ համայնք: | | |
| 67. | Բնակավայրի փողոցների լուսավորություն և ասֆալտապատում /Լեռնարոտ/, հեղինակ՝ Նորիկ Հովսեփյան | Հանրային վատ լուսավորությունը ստեղծում է անվտանգության վտանգներ, մեծացնում է հանցավորության մակարդակը և հանգեցնում էներգիայի անարդյունավետ օգտագործման: Առանց պատշաճ լուսավորության՝ տեսանելիությունը վտանգված է՝ ճանապարհները, փողոցները և հանրային տարածքները վտանգավոր դարձնելով ինչպես հետիոտների, այնպես էլ վարորդների համար: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 68. | Կրթություն /Սասունիկ/, հեղինակ՝ Աննա Խաչատրյան | Առաջարկվում է երիտասարդների համար ընթերցանությանը խթանող ծրագիր, որը նաև կլինի շարունակական գյուղի բնակիչների համար: Առաջարկվում է ապահովել տարածք և մշակույթի տանն առկա գրականության շահագործում: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 69. | Աղբահանություն /Կոշ/, հեղինակ՝ Զարուհի Կարապետյան | Առաջարկվում է Կոշ բնակավայրում տեղադրել աղբամաններ: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 70. | «Օրգով գյուղի գյուղամիջյան փողոցների արտաքին լուսավորության բարելավում», հեղինակ՝ Արսեն Ամիրյան | Ծրագրի շրջանակներում առաջարկվում է Օրգով բնակավայրի գյուղամիջյան մի շարք փողոցներում ապահովել արտաքին լուսավորություն: Ծրագիրը միտված է համայնքի բնակիչների կյանքի որակի բարելավմանը և համայնքային կյանքի ակտիվացմանը: Ծրագրի իրականացման համար պահանջվող միջոցների չափը կազմում է շուրջ 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 71. | Ոսկեվազ գյուղում երկրորդային փողոցների լուսավորություն, հեղինակ՝ Լիլիթ Սարդարյան | Առաջարկվում է իրականացնել Ոսկեվազ գյուղում երկրորդային փողոցների լուսավորություն: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 72. | Ագարակ գյուղում մեծահասակների համար փակ ժամանցի և հանդիպումների տարածքի ստեղծում, հեղինակ՝ Էմիլյա Պետրոսյան | Ծրագրի նպատակն է Ագարակ գյուղում ստեղծել փակ, տաքացվող և հարմարավետ տարածք (սրահ կամ կենտրոն), որտեղ մեծահասակներն ու տարեցները կարող են տարվա բոլոր եղանակներին, այդ թվում՝ ձմռանը, անցկացնել իրենց ազատ ժամանակը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 73. | Մշակույթի տան վերանորոգում /Բազմաղբյուր/, հեղինակ՝ Էդգար Պողոսյան | Բազմաղբյուր բնակավայրում ակնկալվում է մշակույթի տան դահլիճի վերանորոգում, որն էլ կնպաստի կյանքի որակի բարձրացմանը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 74. | Աղբամաններ /Բազմաղբյուր/, հեղինակ՝ Մուշեղ Հովհաննիսյան | Առաջարկվում է Բազմաղբյուր բնակավայրում ապահովել մաքրությունը և բարեկեցիկ կյանքը: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 75. | Մարզական-մշակութային համալիր /Կարբի/, հեղինակ՝ Լիա Գրիգորյան | Կարբի բնակավայրում բացակայում են ժամանակակից պահանջներին համապատասխան սպորտային և մշակութային ենթակառուցվածքները, ինչի հետևանքով սահմանափակված են բնակչության, հատկապես երեխաների և երիտասարդների, ֆիզիկական ակտիվության, առողջ ապրելակերպի ձևավորման, ինչպես նաև մշակութային ու հասարակական կյանքին մասնակցելու հնարավորությունները: Գոյություն ունեցող պայմանները չեն ապահովում մարզական, մշակութային և հասարակական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ միջավայր: /150.000.000-200.000.000 ՀՀ դրամ, փուլային տարբերակով/ | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 76. | «Ուջան բնակավայրում ընթերցասրահի կահավորում և ժամանակակից գրականության համալրում», հեղինակ՝ Լիլիթ Սարգսյան | Առաջարկը նախատեսում է Ուջան բնակավայրում գործող ընթերցասրահի ամբողջական կահավորումը և ժամանակակից, պահանջված գրականությամբ համալրումը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել հարմարավետ սեղաններ և աթոռներ, գրադարակներ, ընթերցանության անկյունների կահույք, ինչպես նաև համալրել գրքային ֆոնդը ժամանակակից հայ և արտասահմանյան գրականությամբ՝ նախատեսված երեխաների, երիտասարդների և մեծահասակների համար: | Մերժվել է | Չի համապատասխանում ավագանու սահմանած առաջնահերթություններին: Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 77. | Ասֆալտապատում և լուսավորում /Օշական/, հեղինակ՝ Սարգիս Կոստանյան | Առաջարկվում է կատարել փողոցի ասֆալտապատում և լուսավորման համակարգի անցկացում: | Մերժվել է | Հայտը բացակայում է: |
| 78. | Կարբիի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակի բարեկարգում և սալիկապատում, հեղինակ՝ Արաքսյա Գրիգորյան | Կարբիի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակը ներկայումս գտնվում է ոչ բավարար բարեկարգ վիճակում, բացակայում են աղբամաններ և նստարաններ, տարածքը անհարթ է, անձրևների ժամանակ առաջանում են ջրափոսեր, բացակայում է որակյալ սալիկապատում և քայլուղիների հստակ կազմակերպում: Այս հանգամանքները դժվարացնում են այցելուների, ուխտավորների և համայնքի բնակիչների անվտանգ ու հարմար տեղաշարժը, | Մերժվել է | Հայտը ներկայացվել է այլ անձի անունով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հատկապես տարեցների և երեխաների համար, ինչպես նաև նվազեցնում են եկեղեցական տարածքի գեղագիտական և մշակութային արժևորման մակարդակը /20.000.000-30.000.000 ՀՀ դրամ/: | | |
| 79. | Կարբիի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակի բարեկարգում և սալիկապատում, հեղինակ՝ Նարեկ Սիմոնյան | Կարբիի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակը ներկայումս գտնվում է ոչ բավարար բարեկարգ վիճակում, բացակայում են աղբամաններ և նստարաններ, տարածքը անհարթ է, անձրևների ժամանակ առաջանում են ջրափոսեր, բացակայում է որակյալ սալիկապատում և քայլուղիների հստակ կազմակերպում: Այս հանգամանքները դժվարացնում են այցելուների, ուխտավորների և համայնքի բնակիչների անվտանգ ու հարմար տեղաշարժը, հատկապես տարեցների և երեխաների համար, ինչպես նաև նվազեցնում են եկեղեցական տարածքի գեղագիտական և մշակութային արժևորման մակարդակը /20.000.000-30.000.000 ՀՀ դրամ/: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 80. | Խաղահրապարակի կառուցում /Օհանավան/, հեղինակ՝ Կարապետ Հովհաննիսյան | Երեխաների առողջ զարգացումը և անվտանգ ժամանցը կարևոր պայման են յուրաքանչյուր բնակավայրի համար: Խաղահրապարակի առկայությունը նպաստում է երեխաների ֆիզիկական ակտիվությանը, սոցիալական շփմանը և առողջ ապրելակերպի ձևավորմանը: Այդ պատճառով անհրաժեշտ է ստեղծել ժամանակակից, անվտանգ և հասանելի խաղահրապարակ բնակավայրում: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 81. | Ֆուտբոլային խաղերի համար հրապարակ /Օհանավան/, հեղինակ՝ Ստեփան Սարգսյան | Ֆուտբոլը լայն տարածում ունեցող մարզաձև է, որը նպաստում է երեխաների և երիտասարդների ֆիզիկական զարգացմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը և թիմային համագործակցության զարգացմանը: Ֆուտբոլի դաշտի կառուցումը կարևոր նշանակություն ունի բնակավայրի սոցիալական և մարզական զարգացման համար: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 82. | Թվով 6 Խելացի կանգառ Բյուրականում, հեղինակ՝ Սերժիկ Մարտիրոսյան | Նախագծի նպատակն է Բյուրական բնակավայրում ստեղծել ժամանակակից, անվտանգ և համայնքի դիմագծին համապատասխան խելացի կանգառներ, որոնք կբարելավեն բնակիչների և հյուրերի սպասարկման պայմանները, կբարձրացնեն | Մերժվել է | Առաջարկը կրկնվում է, հայտը բացակայում է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | համայնքի տեսքը և կծառայեն երկարաժամկետ օգտագործման համար: Ներկայումս Բյուրական համայնքում առկա կանգառները՝ չունեն բավարար պաշտպանություն եղանակային պայմաններից, ապահովված չեն լուսավորությամբ, չունեն տեղեկատվական և հարմարավետ սպասարկման պայմաններ, չեն արտացոլում համայնքի պատմամշակութային և գյուղական ոճը: Առաջարկվում է կառուցել փակ տիպի քարային խելացի կանգառներ: | | |
| 83. | Խաղահրապարակ և առկա խաղահրապարակների բարեկարգում /Բյուրական/, հեղինակ՝ Սյուզաննա Հարությունյան | Նախագծի նպատակն է Բյուրական բնակավայրում ստեղծել ժամանակակից, անվտանգ և կրթական տարրեր ներառող խաղահրապարակ, որը միաժամանակ կպահպանի համայնքի ավանդական քարային ճարտարապետական ոճը և կնպաստի երեխաների ֆիզիկական, մտավոր և սոցիալական զարգացմանը: Առկա խաղահրապարակները՝ սահմանափակ են խաղային հնարավորություններով, չեն ներառում նորարարական կամ կրթական լուծումներ: Առաջարկվում է կառուցել նորարարական քարային խաղահրապարակ, որը կհամատեղի՝ բնական քարից և փայտից կառուցված տարրեր, ժամանակակից և ինտերակտիվ խաղային սարքավորումներ, էներգախնայող և անվտանգ տեխնոլոգիական լուծումներ: | Մերժվել է | Առաջարկը կրկնվում է, հայտը բացակայում է: |
| 84. | Բյուրական բնակավայրում ֆուտբոլի խաղադաշտերի կառուցում և հարակից տարածքների բարեկարգում, հեղինակ՝ Էդուարդ Խաչատրյան | Բյուրական բնակավայրում ֆուտբոլի խաղադաշտերի կառուցում և հարակից տարածքների բարեկարգում առաջարկը նպատակ ունի Բյուրական բնակավայրում ստեղծել ժամանակակից, անվտանգ և հասանելի ֆուտբոլի խաղադաշտեր՝ միաժամանակ իրականացնելով դրանց հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ:Ծրագիրը ուղղված է համայնքի բնակիչների, մասնավորապես երեխաների և երիտասարդների ֆիզիկական ակտիվության խթանմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը և ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպմանը: | Մերժվել է | Հայտը ներկայացվել է այլ անձի անունով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 85. | Աղբամանների տեղադրում /Օհանավան/, հեղինակ՝ Շահեն Բաղդասարյան | Մաքուր և առողջ միջավայրի ապահովումը յուրաքանչյուր համայնքի կարևոր խնդիրներից է: Աղբի ճիշտ հավաքումը և տեսակավորումը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, բնակչության առողջության պաշտպանությանը և քաղաքի բարեկարգմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է ապահովել բավարար քանակի աղբամաններ հանրային տարածքներում: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |
| 86. | **Թվով 6 Խելացի կանգառ Բյուրականում, հեղինակ՝ Սերժիկ Մարտիրոսյան** | **Նախագծի նպատակն է Բյուրական բնակավայրում ստեղծել ժամանակակից, անվտանգ և համայնքի դիմագծին համապատասխան խելացի կանգառներ, որոնք կբարելավեն բնակիչների և հյուրերի սպասարկման պայմանները, կբարձրացնեն համայնքի տեսքը և կծառայեն երկարաժամկետ օգտագործման համար: Առաջարկվում է կառուցել փակ տիպի քարային խելացի կանգառներ, որոնք համատեղում են ավանդական հայկական քարային ճարտարապետությունը, ժամանակակից տեխնոլոգիաները:**<br>**«Խելացի կանգառներ Բյուրականում» նախագիծը համայնքի զարգացման, հարմարավետության և ժամանակակից ենթակառուցվածքների ձևավորման կարևոր քայլ է, որը լիովին համապատասխանում է համայնքային բյուջետավորման ծրագրի նպատակներին:** | Ընդունվել է | |
| 87. | Խաղահրապարակ և առկա խաղահրապարակների բարեկարգում /Բյուրական/, հեղինակ՝ Սյուզաննա Հարությունյան | Նախագծի նպատակն է Բյուրական բնակավայրում ստեղծել ժամանակակից, անվտանգ և կրթական տարրեր ներառող խաղահրապարակ, որը միաժամանակ կպահպանի համայնքի ավանդական քարային ճարտարապետական ոճը և կնպաստի երեխաների ֆիզիկական, մտավոր և սոցիալական զարգացմանը: Առկա խաղահրապարակները՝ սահմանափակ են խաղային հնարավորություններով, չեն ներառում նորարարական կամ կրթական լուծումներ, չեն ապահովում լիարժեք անվտանգ և հետաքրքիր միջավայր տարբեր տարիքային խմբերի երեխաների համար, չեն օգտագործվում որպես համայնքային ակտիվ հանդիպման վայր: Առաջարկվում է կառուցել նորարարական քարային խաղահրապարակ, որը կհամատեղի՝ բնական քարից և փայտից կառուցված տարրեր, ժամանակակից և | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ինտերակտիվ խաղային սարքավորումներ, էներգախնայող և անվտանգ տեխնոլոգիական լուծումներ: | | |
| 88. | Ուջան բնակավայրի 22-րդ փողոցի ասֆալտապատում և խմելու ջրագծի վերանորոգում (մոտ 400 մետր), հեղինակ՝ Արթուր Հակոբյան | Առաջարկվում է իրականացնել Ուջան բնակավայրի 22-րդ փողոցի մոտ 400 մետր հատվածի ասֆալտապատման աշխատանքներ և նույն հատվածում խմելու ջրագծի վերանորոգում: Ծրագիրը նախատեսում է հողային աշխատանքներ, ջրագծի անցկացման և միացման աշխատանքներ, ինչպես նաև ճանապարհի հիմնանորոգում և ասֆալտապատում: Անհրաժեշտ է իրականացնել ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ և վերանորոգել խմելու ջրագիծը՝ ապահովելու համար բնակիչների անվտանգ տեղաշարժն ու կենսական անհրաժեշտ պայմանները: | Մերժվել է | Առաջարկը ներառված է սուբվենցիոն այլ ծրագրում: |
| 89. | Ազգային պարերի խմբի ձևավորում /Սասունիկ/, հեղինակ՝ Նվարդ Պողոսյան | Առաջարկվում է Սասունիկ բնակավայրում վերականգնել և զարգացնել ազգային պարի մշակույթը՝ ձևավորելով շարունակական գործող պարային խումբ՝ ակտիվացնելով երիտասարդական կյանքը և վերակենդանացնելով գյուղի մշակութային ինքնությունը՝ համայնքային համախմբման միջոցով: | Մերժվել է | Չի համապատասխանում ավագանու սահմանած առաջնահերթություններին: Առաջարկը կապիտալ բնույթի չէ: |
| 90. | Արտաշավան համայնքի ճանապարհների ասֆալտապատման և բարելավման ծրագիր, հեղինակ՝ Զվարթ Դանիելյան | Ծրագիրը նախատեսում է համայնքի վարչական սահմաններում գտնվող առաջնահերթ նշանակության փողոցների հիմնանորոգում և ասֆալտապատում՝ գործող շինարարական նորմերի և տեխնիկական պահանջների համաձայն:<br>Աշխատանքների շրջանակում կիրականացվեն նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, հողային և հիմքային շերտերի ամրացում, ջրահեռացման համակարգերի կարգավորում, երկշերտ ասֆալտբետոնե ծածկույթի տեղադրում, ինչպես նաև կատարված աշխատանքների տեխնիկական հսկողություն և որակի ապահովում: | Մերժվել է | Հայտը ներկայացվել է այլ անձի անունով: |
| 91. | Ոսկեվազ գյուղում աղբամանների տեղադրում, հեղինակ՝ Ալինա Հարությունյան | Առաջարկվում է Ոսկեվազ գյուղում աղբամանների տեղադրում: | Մերժվել է | Առաջարկը նախատեսվում է իրականացնել այլ ծրագրի շրջանակներում: |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ**